**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թվականի N 51 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը ապրիլի 2021 թվականի թիվ 698-Ն որոշման 30-րդ և 31-րդ կետերի դրույթները, Հայաստանի Հանրապետության Կառավարության 23-ը հուլիսի 2015 թվականի N828-Ն որոշման դրույթները, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 25/02/2026թվականի N **01/06.2/1070-2026 գրությունը (մտից 402)**

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողեր հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 10-010-0051-0039, մակերեսը՝ 0,04003 հա) գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:

2.Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 10-010-0422-0003, մակերեսը՝ 0,085 հա) գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2026 թ. փետրվարի 25   ք.Եղեգիս